**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

**ԿԵՍՈՅԱՆ ՀԱՅԿ ՍԵՅՐԱՆԻ**

# ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ բաժանման եվ հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները հայաստանի հանրապետությունում

**ԺԲ. 00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2018**

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում

**Գիտական ղեկավար՝** իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ.Վ. Ստեփանյան

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ.Հ. Հակոբյան

իրավաբանական գիտությունների թեկնածու
Ս.Ղ. Քրմոյան

**Առաջատար կազմակերպություն՝** Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի մարտի 24-ին, ժամը 11:00-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (0028, ք. Երևան, Կիևյան 8):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2018 թվականի փետրվարի 23-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,**
**իրավաբանական գիտությունների**
**թեկնածու, դոցենտ** **Հ. Ա. Ստեփանյան**

### *ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ*

***Հետազոտության թեմայի արդիականությունը:*** Յուրաքանչյուր պետության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար իրավական և ժողովրդավարական պետության կայացման ճանապարհին առանցքային կարևորություն է ձեռք բերել պետական իշխանության կազմակերպման այնպիսի կառուցակարգերի առկայությունը, որոնք լուրջ սահմանադրական երաշխիք կհանդիսանան պետական իշխանության գործառույթների կենտրոնացումից խուսափելու և դրանք պետական իշխանության տարբեր մարմինների ու

պաշտոնատար անձանց միջոցով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիման վրա իրականացնելու համար:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում անցում կատարվեց կառավարման խորհրդարանական ձևի, ինչը հանգեցրեց նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի (այսուհետ նաև՝ խորհրդարանական մոդել) անցման: Խորհրդարանական մոդելին անցումը ենթադրում է պետական իշխանության մարմինների ինստիտուցիոնալ (կառուցակարգային) համակարգի վերափոխում, պետական իշխանության մարմիններին և պաշտոնատար անձանց վերապահված որոշ գործառույթների վերաբաշխում, պետական իշխանության մարմիններին ու պաշտոնատար անձանց վերապահված գործառութային, զսպող, հավասարակշռող և փոխլրացնող համապատասխան լիազորությունների վերաբաշխում, բացի այդ, պետական իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց միջև զսպումների, հավասարակշռման և փոխլրացումների նոր կառուցակարգերի ամրագրում:

Խորհրդարանական կառավարման ձևը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման տեսանկյունից պարունակում է իրեն բնորոշ առանձնահատկություններ, որոնց ոչ խորքային վերհանումը և վերլուծումը կարող է որոշակի խնդիրներ առաջացնել: Խորհրդարանական կառավարման ձևի դեպքում, հատկապես պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի փոխհարաբերություններում, ի հայտ են գալիս մարտահրավերներ, որոնք պահանջում են իշխանության նշված ճյուղերի փոխհարաբերությունների բնույթի վերագնահատում: Դա պայմանավորված է նրանով, որ օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռման ապահովման տեսանկյունից բարդություններ են ստեղծվում, քանզի պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերին իրականում «միավորում» է միևնույն քաղաքական ուժը՝ միասնական քաղաքական նպատակներով և առաջնահերթություններով: Այդ պարագայում հիմնավոր է դառնում այն մտահոգությունը, որ օրենսդիր իշխանությունը չի դրսևորի բավարար քաղաքական կամք՝ իր կողմից ձևավորված գործադիր իշխանության նկատմամբ իրական խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար, այլ խորհրդարանական վերահսկողությունը կիրականացվի այնքանով, որքանով դա չի հակասի իշխող կուսակցության ընդհանուր շահերին և առաջնահերթություններին:

Նշվածի հաշվառմամբ գտնում ենք, որ կառավարման խորհրդարանական ձևի պարագայում, պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի փոխհարաբերությունները անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն Ազգային ժողով-կառավարություն փոխհարաբերությունների տեսանկյունից, այլ նաև խորհրդարանական մեծամասնության և

փոքրամասնության: Ընդ որում՝ այդ պարագայում կարևորելով գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության իրականացման համար համարժեք լիազորություններով օժտված խորհրդարանական փոքրամասնության զսպող և հավասարակշռող վճռորոշ դերակատարությունը: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգավորումների պարագայում, որպես խորհրդարանական կառավարման ձևին բնորոշ մարտահրավերներ պարունակող առանձնահատկություն դիտարկվում է նաև պետական իշխանության մարմինների համակարգում խիստ սահմանափակ գործառույթներով և լիազորություններով օժտված Հանրապետության նախագահի ինստիտուտի ոչ համարժեք ընկալման վտանգը և կառավարության ու վարչապետի ձեռքում գործադիր իշխանության գործառույթների ամբողջ ծավալի գերկենտրոնացմամբ ուղեկցվող վտանգները, որի արդյունքում, ինչպես արձանագրվել է 2015 թվականի ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում (այսուհետ՝ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ) խորհրդարանական կառավարման մոդելի անցմամբ չի հաղթահարվում պետական իշխանության գերանձնավորման հնարավորությունը՝ սուբյեկտիվիզմի տարաբնույթ դրսևորումներով հանդերձ: Դա իր հերթին արգելակ է դառնում իշխանությունների իրական բաժանման ու հավասարակշռման համար[1]:

Վերը նշվածով և խորհրդարանական կառավարման ձևին բնորոշ այլ առանձնահատկություններով պայմանավորված՝ կառավարման խորհրդարանական ձևին անցումը իրականում բարդ գործընթաց է, որը «պահանջում» է նաև գիտական հարթության վրա համակարգված և համապարփակ վերլուծության միջոցով վեր հանել խորհրդարանական մոդելին բնորոշ առանձնահատկությունները, որոնց հիման վրա համալիր քննարկման առարկա դարձնելով իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները՝ առաջարկել դրանց գիտականորեն հիմնավորված լուծումներ, որոնք կնպաստեն պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգի, գործառույթների և լիազորությունների սահուն, առանց ձևախեղումների և սահմանադրական ճգնաժամերի այնպիսի վերաբաշխմանն և վերակազմակերպմանը, որոնք գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայում պետական իշխանության մարմինների միջև կապահովեն անհրաժեշտ սահմանադրական հավասարակշռվածություն և ներդաշնակություն[2]:

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:** Հայրենական և արտասահմանյան իրավագիտությունում տարբեր

[1] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», մշակվել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ., 32 էջ.*

[2] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», 9-րդ էջ.*

տեսանկյուններից ուսումնասիրության առարկա են եղել իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսությանը և սկզբունքին առնչվող հիմնահարցերը: Մասնավորապես՝ 2004 թվականին Լոմոնոսովի անվան պետական համալսարանում «Իշխանությունների բաժանումը Հայաստանի Հանրապետությունում, սահմանադրական ձևը և պրակտիկան» վերտառությամբ դոկտորական ատենախոսություն է պաշտպանել Ժ. Դ. Ջհանգիրյանը, 2001 թվականին «Իշխանությունների տարանջատման սկզբունքը և դրա կիրառումը ժամանակակից պետություններում» թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Վ. Վ. Ռաֆայելյանը, 2015 թվականին «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման հայեցակարգի պատմատեսական և իրավական վերլուծություն» վերտառությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Ռ. Հ. Վարդանյանը, 2017 թվականին «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Մ. Մ. Սարգսյանը: Նշված ատենախոսություններում հեղինակների կողմից յուրովի քննարկման առարկա են հանդիսացել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին առնչվող ինչպես տեսական, հայեցակարգային կարևորություն ունեցող հարցերը, այնպես էլ գործնական՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կիրառման երաշխավորման հետ կապված հարցերը, որոնք տվյալ ժամանակահատվածում ծառացած են եղել պետական իշխանության կազմակերպման առջև:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին առնչվող հարցերին անդրադարձ է կատարվել նաև տարբեր արժեքավոր մենագրությունների և գիտական հոդվածների շրջանակներում, մասնավորապես այդ խնդիրներին անդրադարձել են՝ Գ. Գ. Հարությունյանը[3], Ա. Շ. Հարությունյանը[4], Վ. Վ. Ստեփանյանը[5], Ժ. Դ. Ջհանգիրյանը[6], Հ. Հ. Հակոբյանը[7], Գ. Բ.

---

[3] *Տե՛ս* ***Գ.Գ. Հարությունյան,*** *«Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները»: Վերահրատարակություն՝ լրամշակումներով, Երևան, «Նժար», 2016թ., 672 էջ,* ***Գ. Գ. Հարությունյան,*** *«Սահմանադրությունից սահմանադրականություն», Երևան, «Նժար», 2004թ., 140 էջ.,* ***Գ. Գ Հարությունյան,*** *«Սահմանադրական մշտադիտարկում», Երևան, «Նժար», 2016թ., 352 էջ.*

[4] *Տե՛ս* ***А. Ш. Арутюнян,*** *«Институт президента в постсоветстких республиках, конституция и политическая реальность», Ереван, «Петакан цараютюн», 2006г.,* *ст. 151, 5–10,* ***Ա. Շ. Հարությունյան,*** *«Նախագահական իշխանության զարգացման վերջին միտումներն աշխարհում», Երևան, «Պետական ծառայություն» հրատարակչություն», «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2005, N 4, էջ 18-24.* ***А. Ш. Арутюнян,*** *«Место президента в системе политико-правовых институтов постсоветских республик» «Jurisprudencija», 2005, t. 77(69) ст. 5-10.*

[5] *Տե՛ս* ***Վ. Վ. Ստեփանյան,*** *«Իշխանությունների տարանջատումը և սահմանադրական վերահսկողությունը», Երևան, «Սահմանադրական դատարանի տեղեկագիր» հանդես, 1997, N 3, էջ 3-5.,* ***Վ. Վ. Ստեփանյան,*** *«Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրները ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» գիտական հանդես, Երևան, 2017 № 1 (22), 3-10 էջ,* ***Վ. Վ. Ստեփանյան,*** *«Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում», Երևան, «Օրենք և իրականություն», գիտական*

Դանիելյանը[8] Հ. Մ. Խաչատրյանը[9] և հայազգի այլ հեղինակներ: Արտասահմանյան[10] և ռուսական[11] իրավագիտությունում ևս իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին նվիրված են մի շարք արժեքավոր մենագրություններ, գիտական հոդվածներ, զեկույցներ:

Դրանով հանդերձ, հարկ է նկատել, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման հետ կապված հիմնախնդիրները, բազմաշերտ և բազմաբնույթ լինելով պայմանավորված, շարունակում են արդիական մնալ, հետևաբար կարող են դառնալ նոր գիտական հետազոտությունների առարկա՝ չսահմանափակվելով կատարված գիտական հետազոտություններում վեր հանված և քննարկման առարկա դարձած հարցերի շրջանակով կամ դրանցում արտահայտված

---

*հանդես, 2003, N 16, էջ 1-2., **Վ. Վ. Ստեփանյան,** «Կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն», Երևան, «Օրենք և իրականություն», գիտական հանդես, 2003, N 19-20, էջ 1-3.*

[6]*Տե՛ս **Ж. Д. Джангирян,** «Разделение властей в Республике Армения: конституционная модель и практика», Москва, «МГУ» 2003, ст. 240, **Ж.Д. Джангирян**, «Государственная власть Республики Армения: система органов и механизм их взаимодействия», Москва, «КОГИТО-ЦЕЙТР» 2003, **Ж. Джангирян,** «Президент в системе власти: модель Армении», Москва, Государство, № 3, 2004, **Ж. Д. Джангирян,** «Политический режим и его значение для реализации принципа разделения властей», Вестник Академии наук Республики Армения. N 1, 2004., ст. 70-80, **Ժ.Դ. Ջհանգիրյան**, «Իշխանությունների տարանջատում» թե՞ «Իշխանությունների բաժանում», Սահմանադրական դատարան, տեղեկագիր, № 4 (41), 2006թ.*

[7]*Տե՛ս **Հ. Հ. Հակոբյան,** «Խորհրդարանը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում», Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2007թ., 708 էջ.*

[8]*Տե՛ս **Գ. Բ. Դանիելյան,** «Իշխանության տարանջատման սկզբունքի նենգափոխման արդի մարտահրավերները», Երևան, «Պետություն և իրավունք» գիտական հանդես, N2 /28/, հրատարակիչ՝ «ՀՀ իրավաբանների միություն», Երևան, 2005թ., էջեր 5-14, Գ.Բ. Դանիելյան, Վ.Ա. Այվազյան, Ա.Ա. Մանասյան, «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» (գիտագործնական հետազոտություն), Երևան, «Հայրապետ» հրատարակչություն, 2015թ., 240 էջ.*

[9]*Տե՛ս **Հ.Մ. Խաչատրյան,** «Իշխանությունների տարանջատում և պառլամենտարիզմ», Երևան, «Արեգ» հրատարակչություն, 1994 թ., էջ 128.*

[10]*Տե՛ս **M. Vile**, «Constitutionalism and the separation of powers», Oxford, «Oxford university press», 2d ed. 1998, 443 p., **B.Ackerman,** «Goodbye Montesquieu», «Edward Elgar Pub» publisher, Comparative administrative law, Research handbook in Comparative law serias, 2010, chapter 8, 2011, p. 128-133, **B. Ackerman,** «The new separation of powers», Cambridge, «Harvard Law School» Harvard law review journal, volume 113, 2000, pp. 642-727., **J. Waldron,** «Separation of Powers in Thought and Practice», 2013, p. 433-468., **Levinson, Daryl J. and Pildes, Richard H.,** «Separation of parties, not powers» New York university public law and legal theory working papers, 2006, paper 25. pp. 1-73, **L. Little,** «Envy and jealousy, a study of separation of powers and judicial review», San Francisko, «O'Brien Center for Scholarly Publications», Hastings law journal Vol 52, 2000, p. 47-121.*

[11]*Տե՛ս **Л. М. Энтин,** «Разделение властей, опыт современных государств», Москва, Юрид. лит., 1995г., ст. 176, **В. Е. Чиркин,** «Президентская власть (при республиканской форме правления)», Москва, «Государство и право» Журнал, 1997. № 5, ст. 15-23., **В. Д. Зоркин,** «Реализация конституционного принципа разделения власте в практике конституционного суда Россия, конституционныи суда как гарант разделения властие», Москва, Сборник докладов, Институт права и публичной политики Москва, 2004г., ст.17-44, **Л.С. Мамут,** «Публичная власть, государство и разделение властей, конституционный суд как гарант разделения властей», Москва, Сборник докладов, Институт права и публичной политики, 2004г., ст. 262-274., **Я. Мазак,** «Разделение властей в решениях Конституционного суда Словакии // Конституционный суд как гарант разделения властей», Москва, Сборник докладов., Институт права и публичной политики, 2004, ст. 167-174., **Е. О. Курис,** «Доктрина разеления властей в практике конституционного суда Литвы. конституционный суд как гарант разделения властей», Москва, Сборник докладов, Институт права и публичной политики 2004 г., ст. 93-112.*

տեսակետների միանշանակ ընկալմամբ: Հաշվի առնելով նշվածը՝ ատենախոսությունում գիտական նոր մոտեցումներով ուսումնասիրության առարկա են հանդիսացել այնպիսի հարցեր, որոնք դիտարկվել են առանցքային խորհրդարանական կառավարման ձևի պարագայում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրների հաղթահարման տեսանկյունից, և դրանց վերաբերյալ ներկայացվել են նորովի մեկնաբանություններ, և առաջարկվել ի հայտ եկած հիմնախնդիրների լուծման ուղիներ:

Բացի այդ, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի վերաբերյալ գիտական նոր հետազոտությունների իրականացման հետաքրքրությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, ժամանակի ընթացքում ձեռք բերելով նոր ընկալումներ և ի հայտ գալով դրա նենգափոխման վրա ազդող գործոններ, շարունակաբար զարգանալու և վերափոխվելու անհրաժեշտություն է ձեռք բերում, որը դրսևորվում է պետական իշխանության ինստիտուցիոնալ համակարգի վերափոխմամբ և պետական իշխանության մարմինների միջև պետական իշխանության գործառույթների վերաբաշխմամբ, ինչի իրականացմանը լուրջ խթան կարող է հանդիսանալ նաև գիտական միտքը գիտական նոր հետազոտությունների իրականացման միջոցով և գիտականորեն հիմնավորված նորովի մոտեցումների վրա խարսխված լուծումների առաջադրմամբ: Առավել ևս, Հայաստանի Հանրապետության 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով պայմանավորված՝ արդիական է գիտական նոր մոտեցումներով վերլուծության առարկա դարձնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելը բնութագրող առանձնահատկությունները և դրա կիրառման ապահովման հիմնախնդիրները՝ հաշվի առնելով նաև մինչ այդ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի վերաբերյալ ձևավորված առանձնահատկությունները, դրա կիրառման պրակտիկան և ընկալումները:

***Հետազոտության նորմատիվ և տեսական հիմքերը:*** Ատենախոսության նորմատիվ իրավական հիմքն են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2005 թվականի և 2015 թվականի փոփոխություններով), արտասահմանյան պետությունների սահմանադրությունները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքները և օրենքները, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումները: Ատենախոսության տեսական հիմքն են կազմել հայ և այլազգի հեղինակների աշխատությունները: Բացի այդ, ատենախոսությունում լայնորեն օգտագործվել են միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված ակտերը, եզրակացությունները, զեկույցները և միջազգային խորհրդաժողովների վերլուծական նյութերը:

***Հետազոտության մեթոդաբանական հիմունքները:*** Ատենախոսական աշխատանքի ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են հիմնականում պատմահամեմատական, իրավահամեմատական, համակարգային վերլուծության և իրավաբանական վերլուծության մեթոդները: Նշված մեթոդների օգտագործումը հնարավորություն է տվել ոչ միայն բացահայտել Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը բնութագրող հատկանիշները և դրա ապահովման առկա խնդիրները, այլ նաև մշակել առաջարկություններ՝ այդ սկզբունքի արդյունավետ կիրառման ապահովման նպատակով:

***Հետազոտության տեսական նշանակությունը:*** Սույն ատենախոսական աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել բոլոր այն դասընթացների շրջանակներում, որոնց հետազոտության առարկան առնչվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին: Բացի այդ, ատենախոսությունում կատարված վերլուծությունները, հիմնավորումները, առաջարկություններն ու եզրահանգումները կարող են նպաստել իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսության զարգացմանը և աղբյուր հանդիսանալ գիտական նոր հետազոտությունների իրականացման համար:

***Հետազոտության գործնական նշանակությունը:*** Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ դրանում բացահայտված հիմնահարցերի առնչությամբ կատարված վերլուծությունները, հիմնավորումները, առաջարկություններն ու եզրահանգումները իրապես կարող են նպաստել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծմանը՝ սահմանադրական և օրենսդրական հետագա փոփոխությունների իրականացման շրջանակներում նշված խնդիրների լուծմանը միտված գիտականորեն հիմնավորված լուծումների առաջադրմամբ:

***Հետազոտության նպատակը և խնդիրները:*** Ատենախոսության նպատակն է համալիր վերլուծության արդյունքում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ձևավորման և զարգացման օրինաչափությունների հաշվառմամբ վեր հանել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ժամանակակից ընկալումները, հիմնական բնութագրիչները և մոդելները, և այդպիսով համալիր հետազոտության առարկա դարձնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի բնորոշ հատկանիշները և դրա կիրառման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում՝ առաջարկելով դրանց գիտականորեն հիմնավորված լուծումներ: Հետազոտության նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

– ուսումնասիրել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ձևավորման ու զարգացման

պատմաիրավական հիմունքները՝ վեր հանելով հիշյալ սկզբունքը բնութագրող ժամանակակից ընկալումները, բնութագրիչները և կիրառման առանձնահատկությունները իշխանությունների բաժանման և հավասարակշռման տարբեր մոդելի պետություններում.

– համալիր վերլուծության արդյունքում քննարկման առարկա դարձնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կիրառման ապահովման հիմնախնդիրները ՀՀ սահմանադրական փոփոխությունների համատեքստում՝ հետազոտության առարկա դարձնելով պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի գործառույթները իրականացնող մարմինների փոխհարաբերությունների բնույթը և պետական իշխանության մարմինների միջև առկա զսպումների, հավասարակշռության և փոխլրացումների մեխանիզմների արդյունավետությունը, ինչպես նաև իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ և գործառութային բաժանման և իշխանության ճյուղերի անձնակազմերի առանձնացմանը վերաբերող դրույթները.

– ուսումնասիրել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի սահմանադրական երաշխավորման հիմնախնդիրները՝ վեր հանելով պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման և պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճերի էությունն ու դրանց լուծման ուղիները՝ դիտարկելով դատական իշխանության դերակատարությունը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում:

***Հետազոտության օբյեկտը և առարկան:*** Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման և երաշխավորման հետ կապված հարաբերություններն են, իսկ առարկան՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի զարգացման պատմաիրավական հիմունքները, ժամանակակից ընկալումները, բնութագրիչները, մոդելները, նենգափոխմանը նպաստող գործոնները, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իրավական ամրագրումը, զարգացումը, ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

***Հետազոտության գիտական նորույթը:*** Ատենախոսական աշխատանքը հայրենական իրավագիտությունում առաջին համալիր ուսումնասիրությունն է, որում 2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխությունների արդյունքում ժամանակակից ընկալումներին և բնութագրիչներին համահունչ վերլուծության առարկա են դարձել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը բնութագրող հատկանիշները և դրա կիրառման ապահովման հիմնախնդիրները՝ քննարկման առարկա դարձնելով այնպիսի հարցեր, որոնք տեսական գրականությունում բազմակողմ քննության առարկա չեն եղել ,կամ որոնց վերաբերյալ միասնական մոտեցումներ չեն

ձևավորվել կամ սահմանադրական փոփոխությունների արդյունքում գիտական նոր հետաքրքրություն են ձեռք բերել: Դրանցով պայմանավորված՝ ատենախոսության գիտական նորույթը համալիր վերլուծության արդյունքում կատարված գիտական եզրահանգումները, տեսական հիմնադրույթները, ընդհանրացված բնույթի դիտարկումներն են, որոնց հիման վրա մշակվել են առաջարկություններ՝ վերհանված խնդիրներին գիտականորեն հիմնավորված լուծումների առաջադրմամբ, որոնք էլ տեղ են գտել ատենախոսության պաշտպանության ներկայացվող դրույթներում, ատենախոսական աշխատանքի եզրահանգումներում և առանձին հատվածներում:

***Ատենախոսության շրջանակներում պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները***: Պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները.

**1.** Հիմնավորվում է այն տեսակետը, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի դրսևորման մոդելները չեն գտնվում «ստատիկ» վիճակում և ունեն շարունակական զարգացման ու վերափոխման միտում, ինչը դրսևորվում է պետական իշխանության ինստիտուցիոնալ համակարգի վերափոխմամբ և պետական իշխանության մարմինների միջև պետական իշխանության գործառույթների վերաբաշխմամբ:

**2.** Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական փոփոխություններով զուգորդված իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելների «հաճախակի» փոփոխությունը իրականում չի նպաստել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի պատշաճ կիրառման համար անհրաժեշտ սահմանադրական արժեքների պահպանման և շարունակական ամրապնդման երաշխավորմանը: Ուստի այն թեզը, ըստ որի՝ սահմանադրական փոփոխությունների միջոցով իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելների շարունակական փոփոխությունը կարող է երաշխիք հանդիսանալ պետական իշխանության առջև ծառացած խնդիրների լուծման համար, հիմնավոր չէ:

**3.** 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումները պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի եռաթև ինստիտուցիոնալ (կառուցակարգային) բաժանման տեսանկյունից հստակ չեն: Քանզի պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի դասական համարվող եռաթև բաժանման կառուցակարգում որոշակիացված չեն Հանրապետության նախագահի և անկախ (ինքնուրույն) սահմանադրական մարմինների ինստիտուցիոնալ կարգավիճակները:

**4.** Իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի պարագայում Ազգային ժողովի «գործառութային գերակայության» հատկանիշը չպետք է դիտարկել պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև սահմանադրական հավասարակշռության խախտում: Քանի որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի բուն էությունը ոչ թե

իշխանության ճյուղերին հավասարազոր գործառույթներ վերապահելն է, որոնք իրենց բնույթով պայմանավորված, արդեն իսկ հավասարազոր չեն, այլ պետական իշխանության յուրաքանչյուր մարմնին գործառութային, զսպող, հավասարակշռող և փոխլրացնող անհրաժեշտ և բավարար լիազորությունների տրամադրման միջոցով վերջիններիս գործառութային անկախության ապահովումն է:

**5.** Առաջ է քաշվել այն գաղափարը, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի պարագայում գործադիր իշխանության նկատմամբ «իրական» խորհրդարանական վերահսկողության իրականացման գլխավոր գրավականը գործունեության իրավական և քաղաքական համարժեք գործիքակազմով օժտված խորհրդարանական ընդդիմությունն է: Չնայած 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ մի շարք ոլորտներում խորհրդարանական ընդդիմության լիազորությունները ընդլայնվել են, այդուհանդերձ, դրանք դեռևս բավարար չեն՝ խորհրդարանական կառավարման ձևի պարագայում խորհրդարանական մեծամասնությանը ամբողջությամբ ու արդյունավետ կերպով զսպելու և հավասարակշռելու համար: Ուստի՝ անհրաժեշտ է նախատեսել խորհրդարանական ընդդիմության դերակատարության բարձրացման նոր կառուցակարգեր, որպես այդպիսիք առաջարկվել են. ա) կատարելագործել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների միջոցով խորհրդարանական վերահսկողության իրականացման մեխանիզմները՝ նախատեսելով, որ այն պարագայում, երբ Ազգային ժողովի խմբակցության անդամների ընդհանուր թիվը փոքր է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների ընդհանուր թվից, խմբակցությանն իրավունք վերապահվի իր անդամին ներկայացնելու մեկից ավելի մշտական հանձնաժողովների կազմում ընդգրկելու համար, բ) անհրաժեշտ է խորհրդարանական ընդդիմությանը վերապահել Ազգային ժողովում օրենքի ընդունման փուլում լրացուցիչ քննարկումներ պահանջելու լիազորություն, այն է՝ օրենքի ընդունման ժամկետի հետաձգման (կասեցման) լիազորություն, ինչը խորհրդարանական ընդդիմության ձեռքին զսպող միջոց կհանդիսանա խորհրդարանական մեծամասնության կողմից օրենքների հապճեպ ընդունումը կանխելու գործում, գ) խորհրդարանական ընդդիմության իրավական կարգավիճակի, հիմնական գործառույթների, լիազորությունների, ինչու՞ չէ նաև քաղաքական պատասխանատվության հետ կապված հարցերը ամողջական և համակողմանի կարգավորելու նպատակով առաջարկվում է մշակել և ընդունել «Խորհրդարանական ընդդիմության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

**6.** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետությունում առաջացող ոչ բոլոր վեճերն են, այդուհանդերձ, իրավական բնույթ ստանում և հաղթահարվում իրավական հարթության վրա, կառավարման խորհրդարանական ձև պայմաններում՝ Հանրապետության նախագահի Սահմանադրության պահպանմանը

հետևելու գործառույթի շրջանակներում առաջարկվել է, որ Հանրապետության նախագահին վերապահվեն որոշակի լիազորություններ պետությունում առաջացած քաղաքական բնույթի վեճերի (ճգնաժամերի) հաղթահարման համար, Հանրապետության նախագահին, այսպես կոչված, «քաղաքական համերաշխության երաշխավորի» դերակատարության վերապահմամբ:

**7.** Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռվածության ապահովման տեսանկյունից՝ ընդգծելով պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերի սահմանադրական ճանապարհով լուծման կարևորությունը, առաջարկվում է ընդլայնել 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման հիմքով Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն ունեցող սուբյեկտների շրջանակը՝ այդպիսի լիազորություն վերապահելով նաև անկախ (ինքնուրույն) սահմանադրական մարմիններին:

**8.** Հիմնավորվել է այն գաղափարը, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին վերապահված գործառույթների և լիազորությունների բնույթը ու ծավալը հիմք են պնդելու, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում առանցքային դերակատարը Սահմանադրական դատարանն է, ինչը պայմանավորված է հետևյալով. ա) Սահմանադրության մեկնաբանման միջոցով հաղթահարվում են Սահմանադրության խախտման հանգեցնող պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտում ի հայտ եկած բացեր, բացի այդ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին վերաբերող սահմանադրական դրույթները, ժամանակի ընթացքում նոր ընկալումների հիման վրա զարգանալով, ձեռք են բերում մեկնաբանման անհրաժեշտություն, որոնց իրականացումը Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է, բ) պետական իշխանության մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների իրականացման առնչությամբ առաջանում են իրավական (սահմանադրական) բնույթ ունեցող վեճեր, որոնց լուծումը նույնպես Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է:

***Հետազոտության արդյունքների փորձարկումը:*** Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի 13 գիտական հոդվածներում, ինչպես նաև գիտական զեկուցումների տեսքով ներկայացվել և քննարկվել են տարբեր գիտաժողովների ընթացքում և Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի նիստերում:

***Աշխատանքի կառուցվածքը:*** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ութ

ենթագլուխ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

### ***ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:***

**Ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, ատենախոսության տեսական, նորմատիվ և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության տեսագործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ձևավորումը և զարգացումը»** բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում (**«Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի (տեսության) ձևավորման նախադրյալները և զարգացումը»**) վերլուծվել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի (տեսության) ձևավորումը և զարգացումը: Վեր են հանվել այն հիմնական գործոնները, որոնք նպաստել են իշխանությունների բաժանման և հավասարակշռման տարբեր մոդելների ձևավորմանը և զարգացմանը: Անդրադարձ է կատարվել իշխանությունների բաժանման և հավասարակշռման՝ որպես տեսության (հայեցակարգ) և որպես սահմանադրական սկզբունքի հարաբերակցության խնդրին:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխի (**«Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ժամանակակից ընկալումները»**) շրջանակներում ուսումնասիրվել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի վերաբերյալ ձևավորված ժամանակակից ընկալումները, հիշյալ սկզբունքը բնութագրող հիմնական հատկանիշները, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի նենգափոխման վրա ազդող արդի գործոններ:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում (**«Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ժամանակակից մոդելների համեմատական վերլուծություն»**) հետազոտության առարկա է հանդիսացել իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի «կոշտ» և «ճկուն» մոդելները: Համակողմանի վերլուծության արդյունքում վեր են հանվել է հիշյալ մոդելները բնութագրող հիմնական հատկանիշները, դրանց դրական և բացասական կողմերը և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա կատարվել է համեմատական վերլուծություն:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հայաստանյան մոդելի առանձնահատկութ-յունները»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում (**«Իշխանությունների բաժանման և հավասարակշման սկզբունքի ապահովման առանձնահատկությունները կառավարման կիսանախագահական ձևի դեպքում»**) ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի ձևավորման և զարգացման հիմնական փուլերը (մինչև 2015թ. սահմանադրական փոփոխությունները), որի արդյունքում վեր են հանվել իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի յուրաքանչյուր մոդելին բնութագրող հիմնական հատկանիշներ, ինչպես նաև այն խնդիրները, որոնք խոչընդոտել են իշխանությունների բաժանման և հավասարակշռության հայաստանյան մոդելի արդյունավետ կիրառմանը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում (**«Իշխանությունների բաժանման և հավասարակշման սկզբունքի ապահովման հիմնախնդիրները կառավարման խորհրդարանական ձևի պայմաններում»**) հեղինակի կողմից ուսումնասիրության առարկա է դարձել իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի ապահովման հիմնախնդիրները 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության համատեքստում: Վերլուծվել է պետական իշխանության գործառույթները իրականացնող մարմինների՝ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, կառավարության, դատարանների, անկախ սահմանադրական մարմինների գործառութային և ինստիտուցիոնալ կարգավիճակների հետ կապված հարցերը: Վերը են հանվել բոլոր այն հիմնախնդիրները, որոնք բնութագրում են խորհրդարանական կառավարման ձև դեպքում իշխանությունների բաժանման և հավասարակշռման հայաստանյան մոդելին, միևնույն ժամանակ տրվել են այդ հիմնախնդիրների լուծման ուղիներ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Դատական իշխանության անկախության երաշխավորման հիմնախնդիրը և դերակատարությունը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում (**«Դատական իշխանության սահմանադրական կարգավիճակը իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում»**) հեղինակը 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության համատեքստում ուսումնասիրության առարկա է դարձրել պետական իշխանության մարմինների համակարգում դատական իշխանությանը բնութագրող հիմնական հատկանիշները, ինչպես նաև զսպումների և հավասարակշռման այն մեխանիզմները, որոնց միջոցով դատական իշխանությունը փոխկապակցված է պետական իշխանության մյուս մարմինների հետ:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում (**«Սահմանադրական դատարանի դերակատարությունը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում»**) հետազոտության առարկա է հանդիսացել Սահմանադրական դատարանի գործառութային դերակատարությունը

իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում: Հիմնավորվել է, այն հիմնադրույթը, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին վերապահված գործառույթների և լիազորությունների բնույթը ու ծավալը հիմք են պնդելու, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում առանցքային դերակատարը հենց Սահմանադրական դատարանն է:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում (**«Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման էությունը և կառուցակարգեր»**) հետազոտության առարկա են հանդիսացել պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման հետ կապված խնդիրները և պետական իշխանության մարմինների միջև իրենց լիազորությունների իրականացման հետ կապված վեճերի էությունը: Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման և սահմանադրական հավասարակշռության վերականգման գործում ընդգծվել է սահմանադրական հսկողության, վերահսկողության և միջատադիտարկումների գործուն կառուցակարգերի կարևորությունը:

**Եզրակացության** մեջ ներկայացվել են աշխատանքի հիմնական եզրահանգումները, **մասնավորապես՝**

1. Ժամանակակից իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը բնորոշվում է երկու հիմնադրույթներով՝ առաջին՝ իրավական և ժողովրդավարական հռչակված պետությունում պետական իշխանությունը չի կարող կազմակերպվել այլ կերպ, քան իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիման վրա, երկրորդ՝ այն պետություններում, որտեղ պետական իշխանության կազմակերպման հիմքում ընկած է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, դա դեռևս երաշխիք չէ պետական իշխանության գործառույթների կենտրոնացումից խուսափելու և պետական իշխանության գործառույթները պետական իշխանության տարբեր մարմինների միջոցով՝ զսպումների և հավասարակշռման մեխանիզմների միջոցով իրականացնելու համար:

2. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հետապնդած նպատակին հնարավոր է հասնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելներից («կոշտ», «ճկուն») յուրաքանչյուրի ընտրության դեպքում, եթե մինչև իշխանությունների բաժանման և հավասարակշռման որևէ մոդելի ընտրությունը, համակողմանի ուսումնասիրության արդյունքում, հաշվի առնվեն նախատեսվող մոդելին բնութագրող առանձնահատկությունների կիրառելիությունը այն պետությունում, որտեղ այն պետք է գործարկվի:

3. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելների առանձնահատկությունների հաշվառմամբ հանդերձ, գտնում ենք, որ ժամանակակից սահմանադրական զարգացումներին և մարտահրավերներին համահունչ պետական իշխանության

կազմակերպումը արդյունավետ կիրականացվի միայն այն դեպքում, եթե իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը բնութագրվի առնվազն հետևյալ հատկանիշներով՝ ա) պետական իշխանության կառուցակարգային (ինստիտուցիոնալ) հստակ բաժանում, բ) պետական իշխանության գործառութային (ֆունկցիոնալ) հստակ բաժանում, գ) պետական իշխանության ճյուղերի անձնակազմերի առանձնացում, դ) պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների, հավասարակշռման և փոխլրացումների գործուն մեխանիզմների առկայություն, ե) պետական իշխանության մարմինների միջև առաջացած սահմանադրական բնույթ ունեցող վեճերի՝ արդարադատության ճանապարհով լուծում:

4. Համաշխարհային սահմանադրական զարգացումներին համահունչ նկատվում է պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգի վերափոխման և պետական իշխանության գործառույթների վերաբաշխման միտում: Պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգի վերափոխումն արտահայտվում է նրանով, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման դասական համարվող եռաթև բաժանման կառուցակարգն, այլևս միանշանակ չի ընկալվում: Քանի որ որոշ պետություններում ի հայտ են եկել պետական իշխանության նոր ճյուղեր և պետական իշխանության եռաթև բաժանման կառուցակարգից դուրս գործող անկախ սահմանադրական մարմինները: Զուգահեռաբար նկատվում է նաև պետական իշխանության ճյուղերի միջև գործառույթների և լիազորությունների շարունակական վերաբաշխման միտում, ինչը դրսևորվում է հետևյալ կերպ. ա) դատարանները դադարել են լինել միայն օրենքի տառը կիրառողը, անհրաժեշտության դեպքում նաև մեկնաբանում են՝ իրականացնելով «իրավաստեղծ գործունեություն» (դատական նախադեպ), բ) գործադիր իշխանությունը դադարել է լինել միայն «օրենքի կատարող»՝ ձեռք բերելով օրենքների մշակման և նախաձեռնման ոլորտում լայն լիազորություններ և ազդեցիկ դերակատարություն, իսկ որոշ պետություններում զբաղվելով նաև պատվիրակված օրենսդրական գործունեությամբ, գ) վարչական մարմինները երբեմն վարչական վեճերի լուծման միջոցով իրականացնում են վարչական «արդարադատություն», դ) գործադիր իշխանության գործառույթների մի մասը վերաբաշխման արդյունքում վերապահվել են անկախ սահմանադրական մարմիններին:

5. Հայաստանի երրորդ Հանրապետության գոյության ընթացքում իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելների «հաճախակի» փոփոխությունը իրականում չի նպաստել իշխանությունների բաժանման և հավասարակշռման որևէ մոդելի էության ամբողջական ընկալմանը և արդյունավետ կիրառմանը: Ուստի՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման որևէ մոդելի արդյունավետ կիրառման համար առանցքային է պետությունում սահմանադրական կայունության երաշխավորումը՝ տվյալ մոդելի առանձնահատկությունները գործնական հարթության վրա հասկանալու և պրակտիկայում

«արմատավորելու» համար:

6. Հայաստանի Հանրապետությունում կառավարման խորհրդարանական ձևին անցումը ինքնին երաշխիք չէ զարգացնելու համար այն պնդումը, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում կլուծվեն Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում վեր հանված՝ քաղաքական համակարգի գերանձնավորվածության ու գերկենտրոնացվածության, Ազգային ժողովի դերակատարության բարձրացման, արդարադատության համակարգի անկախության երաշխավորման և նմանատիպ կարևորության այլ հարցերը: Նշված մտահոգությունը լիարժեք հիմնավորվում է այն համատեքստում, որ 2005 թվականի ՀՀ սահմանադրական բարեփոխումների իրականացման առանցքային հարցերի շրջանակը ևս շոշափվում էր նշված խնդիրների լուծման հետ, սակայն, ինչպես ցույց տվեց իրականությունը և արձանագրվեց 2015 թվականի Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով, նշված խնդիրները 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում չի հաջողվել պատշաճ լուծել, որի արդյունքում դրանց լուծման նպատակով 2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցան սահմանադրական նոր փոփոխություններ:

7. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված Հանրապետության նախագահի ինստիտուտի բարելավման նպատակով առաջարկում ենք հետևյալը՝ ա) Հանրապետության նախագահի Սահմանադրության պահպանման գործառույթի իրականացման համար նախատեսված լիազորությունների շրջանակը ընդլայնել՝ Հանրապետության նախագահին վերապահելով, այսպես կոչված, «քաղաքական համերաշխության երաշխավորի» դերակատարության ստանձնման համար անհրաժեշտ լիազորություններ, բ) «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում հստակեցնել արարքների այն շրջանակը, որոնք կարող են գնահատվել որպես Սահմանադրության կոպիտ խախտում և հիմք հանդիսանալ Հանրապետության նախագահի պաշտոնանկության համար, գ) նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք կերաշխավորեն Հանրապետության նախագահի քաղաքական չեզոքությունը և չեն սահմանափակվի միայն կուսակցության անդամակցման արգելք նախատեսելով:

8. Հաշվի առնելով այն, որ սահմանադրական նոր կարգավորումների պայմաններում Հանրապետության նախագահը առավելապես ունի արարողակարգային բնույթի լիազորություններ՝ ուստի Հանրապետության նախագահի ընդունած ակտերի կրկնաստորագրման ինստիտուտի չնախատեսումը, որը, որպես կանոն կիրառվում է խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում, հիմնավորված է: Այդ տրամաբանությամբ հիմնավորվում է նաև այն մոտեցումը, որ Հանրապետության նախագահը զրկվել է օրենքների նկատմամբ վետո կիրառելու և դրանք Ազգային ժողով վերադարձնելու լիազորությունից:

9. Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական

հավասարակշռության ապահովման տեսանկյունից կարևորելով պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերի լուծումը՝ դրա հետ կապված առանձնացնում ենք հետևյալ հիմնադրույթները՝ ա) պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերի լուծումը պետք է իրականացվի՝ հիմք ընդունելով հետևյալ հայեցակարգային մոտեցումները՝ առաջին՝ իրավական բնույթի վեճերը պետք է լուծվեն բացառապես իրավական հարթության վրա սահմանադրական կամ վարչական արդարադատության միջոցով, երկրորդ՝ քաղաքական բնույթի վեճերը պետք է լուծվեն բացառապես քաղաքական հարթության վրա քաղաքական բանակցությունների միջոցով, իսկ այն դեպքում, երբ դրանք այդ կերպ չեն լուծվում և իրավական բնույթ են ստանում, նույնպես պետք է լուծվեն իրավական հարթության վրա, բ) չնայած 1995 թվականի և 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին լիազորություն չէր վերապահվել լուծելու պետական իշխանության մարմինների միջև առաջած սահմանադրական լիազորությունների իրականացման առնչությամբ առաջացած վեճերը, այդուհանդերձ այլ լիազորությունների միջոցով Սահմանադրական դատարանը անդրադարձ կատարել է այնպիսի հարցերի, որոնք առնչվել են, երբեմն անմիջականորեն, պետական իշխանության մարմինների միջև առաջացած տարաբնույթ վեճերին, գ) պետական իշխանության մարմինների միջև վեճերի լուծման սահմանադրական մեխանիզմների նախատեսումը բնավ չպետք է դիտարկել պետական իշխանության մարմինների թվաքանակի ավելացման և նվազման համատեքստում (ինչպես արվել է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով):

10. Չնայած Հայաստանի երրորդ Հանրապետությունում ընդունված իրավական ակտերում, այդ թվում՝ նաև սահմանադրական ակտերում «իշխանությունների տարանջատման սկզբունք» և «իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունք» հասկացությունները միակերպ չեն օգտագործվում, այդուհանդերձ, դրանք լինելով նույնաբովանդակ, իրավակիրառ պրակտիկայում ընկալվում են համարժեք կերպով՝ ունենալով և արտահայտելով միևնույն իրավաբանական բովանդակությունը: Ուստի գտնում ենք, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի պատշաճ կիրառման ապահովման տեսանկյունից այդ հասկացությունների որոշակիացումը առանցքային կարևորություն ունեցող հարցերի շարքին չի դասվում:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.**

1. «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ժամանակակից ընկալումները», Երևան, «Աստղիկ գրատուն», «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 93 2016թ., էջ 49-56.

**2.** «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում», Երևան, «Հայաստան Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, «Արդարադատություն» գիտական հանդես, դեկտեմբեր 4 (35) 2016թ., էջ 36-46.

**3.** «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ձևավորման և զարգացման պատմաիրավական հիմունքներ», Երևան, «Հայաստան Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, «Արդարադատություն» գիտական հանդես, հունիս 2 (33) 2016թ., էջ 38-48.

**4.** «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ժամանակակից բնութագրիչները» Երևան, «Անտարես» հրատարակչություն, «Դատական իշխանություն», գիտամեթոդական ամսագիր, օգոստոս-սեպտեմբեր, 2016, թիվ 8/9 206-207, էջ 18-26

**5.** «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիմնական ձևաչափերը», Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 3/2016թ., էջ 136-145.

**6.** «Սահմանադրական դատարանի գործառութային դերակատարությունը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում», Երևան, «Հայաստան Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, «Արդարադատություն» գիտական հանդես, օգոստոս 4 (39) 2017թ., էջ 52-59.

**7.** «Հայաստանի Հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակը իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում» (Հայաստանի Հանրապետության 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում) Երևան, «Անտարես» հրատարակչություն, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, մարտ 2017, թիվ 3/213, էջ 24-34.

**8.** «Անկախ սահմանադրական մարմինների ինստիտուցիոնալ տեղի և գործառութային դերի հիմնախնդիրը իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում», Երևան, «Հայաստան Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, «Արդարադատություն» գիտական հանդես, մայիս 2 (37) 2017թ., էջ 45-53.

**9.** «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի սահմանադրական կարգավիճակն իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում», Երևան, «Աստղիկ գրատուն», «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 97 2017թ., էջ 41-48.

**10.** «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովումը խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում», Երևան, «Աստղիկ գրատուն», «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 98 2017թ., էջ 30-37.

**11.** «Սահմանադրական կայունությունը որպես

իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի ապահովման երաշխիք», Երևան, «Հայաստան Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, «Արդարադատություն» գիտական հանդես, հոկտեմբեր 5 (40) 2017թ., էջ 40-44.

**12.** «Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովումը և պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճերի էությունը», Երևան, «Աստղիկ գրատուն», «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 101 2017թ., էջ 33-39.

**13.** «Դատական իշխանության անկախության ապահովման հիմնախնդիրը իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015թ. փոփոխությունների համատեքստում)», Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 1/2017թ., էջ 142-151.

**КЕСОЯН АЙК СЕЙРАНОВИЧ**

## “СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПРИНЦИПА РАЗДЕЛЕНИЯ И БАЛАНСА ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ”

Дииссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.02.02 «Публичное право»
Защита диссертации состоится 24 марта 2018 года, 11:00 часов на заседании специализированного совета 041 «Юриспруденции» Академии государственного управления РА (Высшая аттестационная камиссия Республики Армения, 0028, г. Ереван, Киевян 8).

### РЕЗЮМЕ

Тема диссертации посвящена современным проблемам обеспечения принципа разделения и баланса государственной власти в Республике Армения.

На пути становления правового и демократического государства для любого государства, в том числе и для Республики Армения, наиважное

значение имеет наличие действенной системы разделения и баланса государственной власти. Однозначно, что вопрос эффективной организации общественной власти на самом деле является сложной проблемой. Этим и обусловлено то обстоятельство, что параллельно мировому прогрессу в конституционном деле ряд государств, в том числе и Республика Армения, после распада Советского Союза продолжают поиски выбора лучшей формы организации общественной власти.

В результате конституционных изменений 2015 года в РА произошел переход к парламентской модели разделения и баланса власти. В диссертации, в контексте измененной Конституции РА 2015 года, предметом анализа развития закономерностей и формирования принципа разделения и баланса власти, с учетом современных пониманий и характеристик, стали проблемы поддержания применения принципа разделения и баланса власти в РА, сделав предметом обсуждения такие вопросы, которые в теоретической литературе не считались предметом всестороннего анализа, или в отношении которых не были сформированы единые подходы, или вызвали новый научный интерес в результате конституционных изменений.

В диссертации указано, что при парламентской форме управления, с точки зрения обеспечения применения принципа разделения и баланса власти, перед РА встали новые призывы. В частности, при парламентской модели разделения и баланса власти звенья законодательной и исполнительной власти в действительности “связывает” одна и та же политическая сила, имеющая единые политические цели и приоритеты. Данная ситуация может привести к “формальности” парламентского контроля над исполнительной властью со стороны законодательной власти, что является серьезной угрозой искажения принципа разделения и баланса власти.

Кроме того, в РА при парламентской форме правления в качестве признаков призывов, присущих последней, в диссертации были рассмотрены также опасность неравномерного восприятия института президента Армении, наделенного весьма ограниченными функциями и полномочиями в системе органов государственной власти, и опасностей, сопровождающихся гиперцентрализованностью всего объема функций законодательной власти в руках премьер-министра.

В рамках диссертационной работы предметом всестороннего анализа стали вышеуказанные проблемы и были предложены пути их преодоления. Следовательно, диссертационная работа имеет не только теоретическое, но и большое практическое значение. В частности, анализы, обоснования, предложения и заключения, сделанные в связи с основополагающими вопросами, обсуждаемыми в диссертации, особенно могут способствовать решению вопросов, выявленных в процессе применения принципа разделения и баланса власти, выдвижением научно обоснованных решений, имеющих тенденцию решения указанных вопросов в рамках осуществления последующих конституционных и законодательных изменений.

**HAYK SEYRAN KESOYAN**

**«CURRENT ISSUES OF ENSURING THE PRINCIPLE OF SEPARATION AND BALANCE OF STATE POWERS IN THE REPUBLIC OF ARMENIA»**

Dissertation for the degree of Ph.D. in Law on the specialization of 12.00.02 «Public Law»

The defense of the dissertation is scheduled for 24 March 2018, at 11:00 o'clock, at a meeting of the specialised council of jurisprudence No. 041 of the Academy of Public Administration of the Republic of Armenia (The Higher Attestation Commission of the Republic of Armenia, 0028, Kievyan 8 str., Yerevan city).

**SUMMARY**

The topic of the dissertation is dedicated to current issues on ensuring the principle of separation and balance of powers in the Republic of Armenia. On the way to the establishment of a legal and democratic state, for each and every state, as well as for the Republic of Armenia, it is of crucial importance the system of separation and balance of powers. It goes without saying, that the issue of effective public organization in fact, is a very complicated issue, perhaps it is conditioned by the fact that next to world constitutional developments, a number of states, including the Republic of Armenia, after the collapse of the Soviet Union, continue their search for the best way to organize the public power.

As a result of the constitutional amendments in the Republic of Armenia, in 2015, transition was made to parliamentary model of separation of powers and balance. In the dissertation, with changes in the context of the RA Constitution, in 2015, taking into account the formation of ensuring the principle of separation and balance of powers in the Republic of Armenia, as well as development of patterns modern perceptions and features, current issues on ensuring the principle of separation and balance of powers in the Republic of Armenia, became a subject of analysis, making matters of discussion such issues, which were not subject to multilateral inquiry in the theoretical literature, or related to which unified approaches have not been formulated, or as a result of constitutional amendments, have gained a new scientific interest.

It is mentioned that, in the case of parliamentary form of government, from the point of view of ensuring the principle of separation and balance of powers in the Republic of Armenia there have emerged new challenges. In particular, in the case of the parliamentary model of power separation and balance, the legislative and executive branches are "united" by the same political power, by common political aims and priorities, this situation might lead to "formalization" of parliamentary control from the side of legislative power over the executive power, which is a serious threat to the separation and balancing of powers.

Besides, in the Republic of Armenia, in case of parliamentary form of government in the RA, as with challenges, that is characteristic of the latter, in the dissertation it is also discussed danger of inadequate perception of the institute of the president with limited functions and powers as well as in the system of state power bodies, and as well as the dangers with full extent of over-concentration of the functions of the executive power in the hands of the government and the prime minister. Within the frames of the present dissertation subject of comprehensive analysis has become the above mentioned issues and the ways of their overcoming have been suggested. Therefore, the dissertation has not only theoretical but also practical importance. Specifically, the analyzes related to the issues discussed in the dissertation as well as substantiations, suggestions and conclusions may really contribute to the solving of issues during separation of powers and also in the usage of principle of balancing, i. e. pushing forward scientifically justified solutions, in the

frames of future constitutional and legislative amendments, aimed at solving the mentioned problems.